ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948 թ., № 10 *Общественные науки*

Վ. Հակոբյան

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կալյուկադնոս (Սելևկիա) և Լամոս գետերի սահմանում, ավելի ճիշտ Թաթլը-սու (Քաղցր ջուր) գետի գետաբերանից մեկ ժամվա ճանապարհ դեպի հարավ-արևմուտք և Փերշենպե գյուղի ավերակներից մոտավորապես ութ կիլոմետր հյուսիս-արևելք, ծովեզերքին, ընկած է Պատմական Կոռիկոս ամրոցը, որի դիմաց գտնվում է Ծովային Բերդ կղզին։

Կոռիկոսի իշխան Վահրամ մարաջախտը Հեթում Պատմիչի վկայությամբ 1220 թվին, Սիր-Ատանի անհաջողությունից հետո կազմակերպում է երկրորդ դավադրությունը թափուր գահը գրավելու համար, սակայն Կոստանդին պայլի ջանքերով այս դավադրությունը ևս ճնշվում է։[1]

Դավադիրները զրկվում են սեփական կայքից և կյանքից։[2] Հենց այս ժամանակ էլ Կոստանդին պայլը Վահրամից գրավում է Կոռիկոս բերդը։ Հետագայում, երբ Կոստանդին պայլի որդին՝ Հեթումը Զաբելի հետ ամուսնանալով ստանձնում է թագավորական իշխանությունը, Կոստանդին պայլը, որպես

---

[1] *«Ժամանակագրութիւնք երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան պատմութեանց հայ ֆռանկ և ասորի շարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսոյ», էջ 83։*

Սույն աշխատությունը գտնվում է նույն հեղինակի «Պատմութիւն Թաթարաց...» աշխատության (Վենետիկ, 1842 թ.) հրատարակության կազմում։ Միխ. Ասորու «Ժամանակագրության» մեջ հանդիպում ենք վերոհիշյալ դեպքերի ավելի մանրամասն նկարագրության. Նա գրում է.

> *«Յայսմ ժամանակի (Սիր-Ատանի սպանությունից հետո, Վ. Հ.) ոմանք յիշխանացն հայոց ապստամբեալք եղեն ընդ Ռուբինայ բրինձին Անտիոքու, կամելով զնա թագաւորեցուցանել. յորոց էր Ճօսլին մարաջախտ և Լեւոն Կապնուն տէրն և Կոռոսակն և այլք. որք առեալ զբրինձն Ռուբէն և մտին ի Տարսուս և ամրացան։ Իսկ պարոն Կոստանդին և տէր Յովհաննէս կաթուղիկոսն գնացին զօրօք և պաշարեցին զնոսա սուղ ինչ ժամանակս, և յաղթեցին նոցա և առին զքաղաքն, և ըմբռնեցին զապստամբսն որ և ամենեքեան բանտարգեալք եղեալ վախճանեցան ի կապանս, և հանդարտեցաւ երկիրն» («Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1871 թ., էջ 515—516)։*

Մարաջախտների ցանկում («Սիսուան», էջ 485, Սմբատ Գունդստաբլ «Տարեգիրք», Փարիզ. 1859 թ., էջ 137) Ճոսլին անունով մարաջախտ չի հիշվում։ Հակառակ Միխ. Ասորու վկայության այդ ժամանակաշրջաններում մեզ հայտնի է Ռոսլին անունով արքունի սենեկապետ—հանդերձապետ («Սիսուան», էջ 485). Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքը կարելի է ենթադրել, որ հեղինակը հավանաբար շփոթել է պաշտոնները սենեկապետի փոխարեն գրելով մարաջախտ։ Եթե ճիշտ է մեր այս ենթադրությունը, նշանակում է այլ իշխանների թվում դավադրությանը մասնակցել է նաև Ճոսլին սենեկապետը։

[2] *Կենտրոնաձիգ պետություն ստեղծելու նպատակով, Կ. Գանձակեցու վկայությամբ, Հեթում 1-ին թագավորի օրոք էլ թագավորահայր Կոստանդին պայլը շարունակում էր անհնազանդ իշխաններին հետապնդել «...զոչ հնազանդեալսն բառնայր ի միջոյ՝ զոմանս փախստական առնելով և զայլս մահուամբ» («Պատմութիւն», Թիֆլիս, 1909 թ., էջ 179)։*

թագավորահայր իր որդիների մեջ բաժանում է արքունի պաշտոնները և բռնագրաված բերդերը։ Ավագ որդին՝ Սմբատը նշանակվում է գունդ-ստաբլ, երկրորդ որդին՝ Բարսեղը դառնում է հոգևորական, Դրազարկի վանքի առաջնորդ, երրորդ որդին՝ Լևոնը նշանակվում է մարաջախտ, իսկ չորրորդ որդին՝ Օշինը ստանում է պայլության պաշտոնը,[1] իմիջիայլոց նաև Վահրամից գրաված Կոռիկոս բերդը։

Սմբատ Գունդստաբլը դժգոհում է հորից Կոռիկոս բերդը իր եղբորը՝ Օշինին հանձնելու առթիվ, լինելով ավագ որդին, նա իրեն է հարմար համարում տեր դառնալու այդ բերդին. ընտանեկան այս անախորժությունը հարթելու համար նրանք օգնության են կանչում իրենց փեսա Հովհան Իպլենին՝ Ցոպպեի կոմսին, որին վերագրում են Երուսաղեմի Ասիզների հավաքումը։

Վեճի լուծման մանրամասնությունները գտնվում են «Երուսաղեմի Ասիզների» 145-րդ գլխում, որտեղ Հով. Իպլենը գրում է. «Ով որ տեր է դարձել մի կալվածքի կարող է այս երկրի օրենսգրքով կամ սովորությամբ այդ տալ իր ժառանգորդներից նրան, որին կցանկանա ....և ինձ այս ասացին սենյոր Սեթը, տեր Բելլիանը և տեր Նիկոլ Անտիոմը, որոնց հոգիներին Աստված օգնական լինի։ ...Եվ ես նրանց հարցրի այն, ինչ որ Հայաստանի պայլը ինձ հաղորդել էր, խնդրելով, որ ես նրանց հարցնեմ, թե Երուսաղեմի թագավորության օրենքներով ու սովորությամբ կարող է իր գրաված կալվածքը տալ իր զավակներից նրան, որին ինքը կցանկանա... Եվ խնդրեց, որ Կոռիկոսի մասին տեղեկացնեմ, որի տեր էր դարձել ինքը և որ նա ուզում էր տալ իր որդի Օշինին և թե պարոն Սմբատը, Հայաստանի գունդստաբլը, որ իր անդրանիկ որդին էր, հակառակում էր... ասելով թե իրավասու չէր։ Եվ այդ մասին ինձ հաղորդեց, որ իրենց տեղեկացնեմ, թե ինչ կարող է անել։ Եվ նրանք (վերոհիշյալ երեք անձնավորությունները. Վ. Հ.) ինձ ասացին, թե այո, այդպես է։ ...Բացի այդ, քանի որ կալվածք գրավողը կարող է հանձնել կամ թողնել այն սենյորին, որից բռնագրավել է և այդ անելուց հետո իր ժառանգորդները չեն կարող հետո կրկին ձեռք բերել կալվածքը այդ թագավորության օրենքներով կամ սովորությամբ, ուրեմն կարող է նույն օրենքներով կամ սովորությամբ այդ տալ իր ժառանգորդներից նրան, որին կցանկանա...։ Իսկ ես այնպես ինչպես նրանք ասացին տեղեկացրի Հայաստանի հիշյալ պայլին և նա Կոռիկոսը տվեց Պարոն Օշինին...»։[2]

Այսպես հաստատվեց Կոռիկոսում Օշինը։

Համաձայն Սմբատ Գունդստաբլի վկայության՝ Օշինը մահացել է 1263 թվին։[3] Նրան հաջորդում է իր ավագ որդի Գրիգորը, որի մասին ոչինչ հայտնի չէ. միայն մեկ հիշատակարանից պարզվում է, որ նա տա-

---

[1] Կ. Գանձակեցին հավանաբար սրա մասին է ակնարկում, երբ գրում է. «Կարգեաց և զանդրանիկ որդին զՍմբատ՝ զօրավար եւ զմիւսն իշխան թագաւորութեանն» (ընդգծումը մերն է. Վ. Հ.). Նույն տեղում, էջ 170.

[2] Հմմ. Ալիշան. «Յուշիկք հայրենեաց հայոց», Վենետիկ, 1921 թ., էջ 469։

[3] Ալիշան. «Սիսուան», էջ 334—338։ Նաև «Հետազօտութիւնք Նախնեաց ասմկօրէնի վրայ», Ղևոնդ Յովհաննեան, Վիեննա, 1879, էջ 188—189։

[4] Սմբատ, «Տարեգիրք», էջ 124։ Ալիշան «Սիսուան»-ում Օշինի մահվան տարեթիվը դնում է 1265 թ. (էջ 193,386), իսկ 555-րդ էջում՝ 1264 թ.։

կավին 1280 թ. կենդանի էր։[1] Գրիգորի մահից հետո Կոռիկոսը ժառանգում է նրա կրտսեր եղբայր Հեթումը, մեղ հայանի պատմիչը։[2]

* * *

Եթե մի կողմը թողնենք Հեթում Պատմիչի պատվերով ընդօրինակված, մինչև հիմա մեզ հայտնի տոմարն ու բժշկարանը և ոմանց կողմից նրան վերագրված մի քանի աշխատությունները (որոնց իսկությանը կասկածանքով է վերաբերվում Ալիշանը[3]), ապա կարող ենք հիշել Հեթում Պատմիչից մեզ հասած միայն հետևյալ աշխատությունները՝

ա. «Ժամանակագրութիւնք երեք հարիւր և մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի դանադան պատմութեանց՝ հայ ֆռանկ և ասորի շարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսոյ», որի 6 տարբեր ընդօրինակությունները գտնվում են ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանում։[4] Սույն աշխատությունը հրատարակվել է Վենետիկում, 1842 թվին։[5]

բ. «Պատմութիւն թաթարաց շարագրեալ ի Հեթմոյ Արամեան ի կարգէ Պռէմոնսդրատեանց»։ Այս աշխատության հայերեն բնագիրը մեզ չի հասել։ Վենետիկի մխիթարյան Մ. Ավգերյանը այն լատիներենից թարգմանել է հայերեն և «Ժամանակագրութեան» հետ մեկ տեղ հրատարակել է 1842 թ. Վենետիկում։ «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը հրատարակվել է եվրոպական զանազան լեզուներով մի քանի անգամ։[6]

Հեթում Պատմիչի մատենագրական մի գործը՝ հիշատակարանը, որը մինչև հիմա անհայտ էր, ներկա հոդվածով ներկայացնում ենք գիտական հասարակությանը։

Հիշատակարանը ծավալով մեծ չէ, կազմում է ընդամենը փոքրադիր 5 էջ։ Այն գտնվում է ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Մատենադարանի № 5613 ժողովածուի 349 ա—351 ա էջերում։

Ստորև բերում ենք № 5613 ձեռագրի նկարագիրը՝ բաղկացած է 376 թերթից։ Մեծությունը՝ 16 × 12,5։ Նյութը՝ թուղթ։ Վիճակը՝ վնասված (կան կորած և մաշված թերթեր)։ Գրությունը՝ միասյուն։ Գիր՝ բոլորագիր և նոտրգիր։ Ժամանակ՝ 1608 թ.։ Գրչության վայր՝ Գ. Պոլիս։ Գրիչներ՝ Հակոբ (էջ 161բ), Բարունակ սարկավագ (էջ 194բ), Դանիել տիրացու (էջ 348 բ), Մուրադ սարկավագ (էջ 375 ա) և ուրիշները։ Ստացող՝ տեր Ազարիա։

Հեթում Պատմիչի հիշատակարանը գրված է նոտրգրով, ոչ թե վերևում հիշված գրիչների, այլ մեկ ուրիշի կողմից։ Հիշատակարանը խորագիր չունի։ 349 ա էջի վերին մասից երկու տող բաց է թողնված, հավանաբար խորագիրը գրելու նկատառումով։

Այս հիշատակարանը չափազանց արժեքավոր մի վավերագիր է 13-րդ

---

[1] «Սիսուան», էջ 336—337։

[2] Զամչեան, «Պատմութիւն Հայոց», հատոր Գ, էջ 379։

[3] «Սիսուան», էջ 339։

[4] Տես № № 663, 1889, 2037, 3079, 5599, 7841 ձեռագրերում։ Ներկա հիշատակարանը Մատենադարանի ձեռագիր բիբլիոգրաֆիկ ժամանակում սխալմամբ նշված է, որպես Հեթում Պատմիչի «Ժամանակագրության» հատված։

[5] Սույն աշխատությունը գտնվում է նաև «Recueil des Historiens des Croisades. Documents Armeniens», tome premier, Paris, 1869, p. 471—490։

[6] Հ. Անասյան, «Հայոց անձնանունների բառարան», Երևան, 1946թ., հատոր Գ, էջ 74։

դարի երկրորդ կեսի Կիլիկիայի կյանքն ըմբռնելու համար, գրված է ընկճված, հուսահատական տրամադրությամբ, որն արդյունք է եգիպտական սուլթանների Կիլիկիա և շրջակա երկրները կատարած ավերիչ ասպատակությունների։

Ճիշտ է, ժամանակի անկումային տրամադրություններն արտահայտող մի քանի փաստաթղթեր մեզ հասել և արդեն հրատարակվել են,[1] սակայն Հեթում Պատմիչի հիշատակարանը, վերջիններիս համեմատությամբ ունի մի շարք առավելություններ։ Այստեղ հանդիպում ենք մի քանի կոնկրետ վկայությունների, որոնք հնարավորություն են տալիս գոյություն ունեցող որոշ ենթադրություններ ուղղելու կամ հաստատելու։

Ինչպես հայտնի է, եգիպտական սուլթան Ինտխտարի և նրա հաջորդների արշավանքները դեպի Կիլիկիա և լատինական թագավորության քաղաքներ, հայ պատմիչների կողմից նույնպես հիշվում են։ Այսպես, Անտիոքի գրավումը Ինտխտարի կողմից Ստ. Օրբելյանը,[2] Հեթում Պատմիչը[3], Սմբատը[4] դնում են 1268 թվին, առանց ամսաթիվը հիշելու։ Ուսումնասիրողներից Ալիշանը «Սիսուանի» ժամանակագրության տախտակում Անտիոքի գրավման տարեթիվը նշում է 1268 թ. մայիսի 18-ին։[5] Անտիոքի գրավման ճիշտ ամսաթիվը պահվել է Հեթում Պատմիչի առաջարկվող հիշատակարանում։ Այդ մասին այնտեղ կարդում ենք. «Զմեծն Անտիոք ղղարմանահրաշն ե ղգեղեցկաշէնն, որ ընդ տէրութեամբ Իրնձին, զոր կործանեալ ի հիմանց աւերեաց Ինտուխտար սուլտանն, որ անուանէր Մելիք Տահր ի թուին Զժէ (=1268) յաւուր շաբաթու ի ծաղկազարդին»։

1268 թ. զատիկը ընկնում է ապրիլի 8-ին,[6] իսկ ծաղկազարդի շաբաթ

---

[1] Մեզ հայանի են՝ «Կոստանդին Ը. կաթողիկոսի պահարան նշխարաց սրբոց ի վանս Սկեւռայ» (Ալիշան, «Հայապատում», էջ 498–499)։ «Սուլտանն Եգիպտոսի գրաւէ զկալուածս փրանկաց յառորիս» (Հեթում Բ) «Հայապատում», 499–500»։ «Առուն Հռոմկլայի յեգիպտացւոց, հաշտութիւն ընդ Հեթմոյ Ը.», նույն տեղում, էջ 500—502 «Ցիշատակ Հեթմոյ Բ արքային», նույն տեղում էջ 517–519։ Նույնը «Արարատում», 1869 թ., էջ 39—41։ «Գիրք Քղթոցի» Թովմաս գրչի 1298 թ. ընդօրինակության հիշատակարանը («Գիրք Քղթոց», Թիֆլիս, 1901թ., էջ 537—538)։ Ա. Սյուրմեյան «Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի...», Երուսաղեմ, 1935 թ., հատ. Ա., էջ 347։ Գ. Սրվանձտյան, «Թորոս աղբար» մասն Բ, Կ. Պոլիս, 1885 թ., էջ 436։ Պետ. Ձեռագրատան № 482 ժողովածուի 53ր էջում՝ Թորոս գրչի հիշատակարանը։ Վերջինս հրատարակված չէ։

[2] «Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Սանփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Փարիզ, 1859 թ., հատոր Բ., էջ 188։

[3] «Պատմութիւն թաթարաց», Վենետիկ, 1842 թ., էջ 73։ Նույն տեղում, «Ժամանակագրութիւնք», էջ 84։

[4] «Տարեգիրք...» էջ 125։ Սամվել Անեցին վերոհիշյալ դեպքի համար նշում է 1272 թիվը—Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1893 թ., էջ 151։

[5] «Սիսուան», էջ 555։ Զամչյանը և Օրմանյանը այս դեպքը նշում են 1268 թվին («Հայոց պատմութիւն» հատոր Գ, էջ 265), «Ազգապատում», էջ 1663։

[6] Հմմ. Շիրակացու «ՇԼԲ» բոլորակի աղյուսակի հետ (պրոֆ. դր. Ա. Աբրահամյան, «Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944 թ. էջ 270)։ Ֆրանսիացի հայտնի առմարգետ Է. Դյուլերոյի հաշվումներով 1268 թ. զատիկը ընկնում է ապրիլի 7-ին («Recherches sur la chronologie Armenienne", Par. m. Ed. Dulaurier, tome I, p. 417. Paris) Այս հաշվով ծաղկազարդի շաբաթ օրը կընկնի մարտի 30-ին։ Տոմարական հաշիվներում մեզ օգնել է Երևանի Աստղադիտարանի գիտ. աշխատող Վաթյան Լեոնը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։ Տոմարական մեր հաշվումների արդյունքը ստուգեցինք մաթեմատիկոս և աստղաբաշխ Գառուսի զատկի օրը որոշելու առաջարկած բանաձևով։

օրը կլինի մարտի 31-ը, այսպիսով Անտիոքը գրավել են 1268 թ. մարտի 31-ին, շաբաթ օրը։

Եգիպտոսի սուլթան Մելիք Աշրաֆի կողմից Աքքայի գրավումն ըստ Հեթում Պատմիչի,[1] Սմբատ Գունդստաբլի[2] ժամանակակից հիշատակարանի[3] և Ստ. Օրբելյանի[4] կատարվել է 1291 թ., իսկ ըստ Սամ. Անեցու շարունակողի՝ 1289 թ.։[5] Ուսումնասիրողներից միայն Ալիշանն է նշում Աքքայի գրավման ամսաթիվը՝ 1291 թ. մայիս 15։[6] Ալիշանի աղբյուրը մեզ անհայտ է։ Իրականում Մելիք Աշրաֆը, ինչպես մատնացույց է անում Հեթում Պատմիչն իր հիշատակարանում, Աքքան գրավել է 1291 թ. մայիսի 18-ին։

Ահա համապատասխան վկայությունը. «Եւ զփառաւորն Պաղոմիդէ, որ նա ինքն Աքայ, որ էր տուն իշխանութեան Դամփլուն և Ոսպէթալին և այլոց անուանաւոր իշխանաց, շինեալ բարձագոյն պրճօք և հաստահիմն պարսպօք, և գեղեցկայարմար տաճարօք, զոր կործանեալ տապալեաց անօրէն որդին Ալֆէ Մելիք Աշրաֆն, ի թուին ՉԽ. ի մայիս ԺԸ»։[7]

Կարծում ենք. պարզ է ու անառարկելի, որովհետև գործ ունենք դեպքերին ժամանակակից անձնավորության վկայության հետ։ Սակայն ավելի հետաքրքիր են Հռոմկլայի գրավման տվյալները հիշատակարանում։ Ինչպես հայտնի է Մելիք Աշրաֆի կողմից Հռոմկլայի գրավման մասին մեր պատմիչները ոչ միայն ամսաթիվ չեն հիշատակում, այլև ոմանք տարբեր տարեթվեր են հաղորդում։

Այսպես Ստ. Օրբելյանի, Հեթում Պատմիչի,[9] Սմբատ Գունդստաբլի,[10] ժամանակակից հիշատակարանի հեղինակի[11] վկայության համաձայն՝ Աշրաֆը Հռոմկլան գրավել է 1292 թվին։ Սամվել Անեցու շարունակողներից մեկը հիշյալ դեպքը դնում է 1295 թվին,[12] իսկ մյուսը՝ 1293

վերջինիս հաշվումներով 1268 թ. զատիկը ընկնում է նույնպես ապրիլի 8-ին (տես «Հանդէս Ամսօրեայ» 1910 թ., էջ 149—151)։

[1] «Պատմութիւն Թաթարաց», էջ 74։ Նույն տեղում, «Ժամանակագրութիւնք», էջ 85։

[2] «Տարեգիրք...», էջ 126։ Սմբատի վկայությունը բավական ընդհանուր է. «ի թուին 740 Աշրաֆն ջնջեաց զքրիստոնեայքն ի Սեհլէն եւ էառ զվեց քաղաքս»։ Կարելի է համարձակ ասել, որ Սմբատը վեց քաղաքների մեջ անշուշտ նկատի է ունեցել նաև Աքքան։

[3] «Հայապատում», էջ 500։

[4] «Պատմութիւն նահանգին Սիսական...», հատոր Բ, էջ 189։

[5] Սմ. Անեցի, Ժամանակագրութիւն, էջ 163։

[6] «Սիսուան», էջ 556։ «Պատմութիւն նահանգին Սիսական»-ի հրատարակիչ Կ. Շահնազարյանը հրատարակության 150-րդ ծանոթագրության մեջ Աքքայի գրավման մասին գրում է. «իսկ քաղաքն, զորմէ բանս է, ի հնումն կոչէր Պտողէմայիս, ի միջին դարու Աքր, Աքեայ կամ Սէնժան զ՚ Աքր, ոչ հեռի ի Կարմեղ լեռնէ.... Մալիք-Աշրաֆ յետ երկամսեայ պաշարման առ Պտողէմայիս ի 16 յունիսի 1291 ամի և ի սուր անխնայ կոտորեաց զապաստանեալսն ի նմա», էջ 357։ Մեզ հայտնի չեն հրատարակչի ոչ աղբյուրը, ոչ էլ հաշվումները. սակայն, ինչպես քիչ հետո ցույց կտանք, Մելիք-Աշրաֆը Աքքան գրավել է 1291 թվի ոչ թե հունիսի 16-ին, այլ մայիսի 18-ին։

[7] Պետ. Ձեռագրատան № 3425 ժողովածուի ժամանակագրության հեղինակի համաձայն Աքքան գրավել են 1290 թ. մայիսի 18-ին (էջ 7բ)։ Սակայն այստեղ էլ սխալ է նշված տարեթիվը։

[8] «Պատմութիւն նահանգին Սիսական...», հատոր Բ, էջ 192։

[9] «Ժամանակագրութիւնք», էջ 85։

[10] «Տարեգիրք...», էջ 126։

[11] «Հայապատում», էջ 501։

[12] Սամվել Անեցի.... 153։ Հրատարակչի ձեռքի տակ գտնվող չորրորդ ձեռագիրը հիշյալ դեպքը դնում է 1292 թ.։ Նույն տեղում, էջ 153. տես տողատակի տարբերությունը։

թվին։[1] Ուսումնասիրողներից Զամչյանը[2] 1294 թվին, իսկ Ալիշանը՝ 1292 թ. հուլիսի 28-ին[3]։ Վերջինիս աղբյուրը նույնպես անհայտ է մեզ։ Առաջին պատմիչները չնայած ճիշտ են նշում Հռոմկլան գրավելու տարեթիվը՝ 1292 թ., սակայն չեն նշում ամսաթիվը, իսկ Ալիշանի նշած ամսաթիվը իրականից հաշված է մեկ ամիս ուշ։

Հեթում Պատմիչի հիշատակարանը մեզ տալիս է այդ դեպքի հաստատ և անվիճելի դատան։ Այս առթիվ հիշատակարանում կարդում ենք. «Նմանապէս ե սա (Մելիք Աշրաֆը. Վ. Հ.) այնքան ներողութեամբն Աստուծոյ և յաճախութեամբ մերոցն մեղաց զօրացեալ, մինչ զի առ զաթոռ հայրապետութեանն հայոց՝ զԳլայն Հռոմայական, ...ի թուին ՉԽԱ. յունիսի ԻԸ»։

Այնուհետև հիշատակարանում Հեթում Պատմիչը նկարագրում է Հռոմկլայի համար մղվող կռիվների հաստատ բնույթը, որով հաստատվում է Ստ. Օրբելյանի այդ մասին տված վկայությունը։

Ըստ հիշատակարանի հաղորդած տվյալների այդ կռիվներում մինչև իսկ օգտագործել են ժամանակի ռազմական տեխնիկայի նվաճումները՝ «նորագործ մեքենայից»։ Հռոմկլայի համար մղված կռիվներն ըստ Սմբատ Գունդստաբլի տևել են «շատ օրեր»[4], իսկ Օրբելյանը հիշում է «ամսօրեայ ժամանակաւ»,[5] որի ընթացքում, ինչպես վկայում է Հեթում Պատմիչը, պաշարողները Հռոմկլան գրավելու համար գիտել են մի շարք միջոցառումների «...և անհուն զօրօք և բազմաձեռն պատերազմողօք և նորագործ մեքենայից հնարաւորութեամբ պատեալ պաշարեաց սղարեալ բաբանօք ի վերուստ և քարափոր ծակամտօք նաղմելով նեղեալ ի ներքուստ...»։

Այս կռիվների ընթացքում պաշարվածները այնքան համառ և հերոսաբար են կռվել, որ Մելիք Աշրաֆը միտք է ունեցել նույնիսկ թողնել Հռոմկլայի պաշարումը։[7] Ի վերջո եգիպտական զորքերին հաջողվում է գրավել նախ քաղաքը, «ապա զներքին բերդն, և ապա զբարձրագոյն Կլայն յորում կայր շինեալ գեղապաճոյճ եկեղեցին...»[8]։ Հայերի համառ դիմադրությունը եգիպտական զորքերի մեջ առաջ է բերում կույր ատելություն։ Այդ պատճառով Հռոմկլան գրավելուց հետո բնակիչների և այնտեղ պատըսպարվածների մի մասին անխնա սրի են քաշում, մյուս մասին գերեվարում, իսկ կաթողիկոսական հարստությունները ենթարկում թալանի։ Այս դեպքերի առթիվ Հեթում Պատմիչի հիշատակարանում կարդում ենք.

«...Յորում (Հռոմկլայում. Վ. Հ.) էր և աջ մերոյ սուրբ Լուսաւորչին, և առաքելական և մարտիրոսական նշխարք, և սրբութիւնք անթիւք և կտակարանք աստուածային դրոց գանձեալ բազմութեամբ, ...գերեաց զտէրն և զհայրն մեր հոգևոր, զկաթուղիկոսն ամենայն հայոց զտէր Ստեփաննոս, եպիսկոպոսօք և վարդապետօք, քահանայիւք և անհամար քրիստոնէ-

---

[1] Նույն տեղում, էջ 163։

[2] «Պատմութիւն Հայոց», հատոր Դ, էջ 287—288։

[3] «Սիսուան», էջ 556։ Ալիշանից օգտվել է Օրմանյանը—«Ազգապատում», էջ 1732։

[4] «Տարեգիրք...», էջ 126։

[5] «Պատմութիւն Նահանգին Սիսական...» հատոր Բ., էջ 190։

[6] Հմմ. Ժամանակակից հիշատակագիր «...և պատեալ պաշարեաց զնա (Հռոմկլան. Վ.Հ.) բազմաձեռն պատերազմօք, բարձրագիպ (բաբ) անօք ծանր քարանց, քարահատ արուեստականօք, և բազմափոր դարանամտօք...», «Հայապատում», էջ 801։

[7] «Պատմութիւն Նահանգին Սիսական...», հատոր Բ, էջ 191։

[8] Նույն տեղում, էջ 190։

իւք և սպառեալ կազգն քրիստոնէից»։[1] Հետաքրքիր է նաև հիշատակարանի այն վկայությունն, ըստ որի «... Բնակեցոյց ի հայրապետանոցին և ի գեղեցկապաճոյճ աաճարին՝ ղուրացողսն Քրիստոսի»։ Վերոհիշյալ խոսքերը հավանաբար վերաբերում են այն հայերին, որոնք կոտորածից փրկվելու համար ընդունել էին մահմեդականություն։

Արտաքին թշնամու հաճախակի կրկնվող արշավանքներն ու ասպատակությունները, որը Կիլիկիայում ստեղծել էր անապահով վիճակ,[2] հատկապես 1289 թ. Տրապոլոի գրավումից ի վեր, ստիպում է Հեթում Պատմիչին թողնել Կոռիկոս ամրոցը և պատսպարվել անմատչելի Ծովային Բերդ կղզում, որը գտնվում էր Կոռիկոսի դիմաց։

Մեր կարծիքով Հեթում Պատմիչը Ծովային Բերդ կղզի տեղափոխվել է 1289 թ. Տրապոլսի գրավումից անմիջապես հետո, այդ երևում է նրանից, որ եգիպտական սուլթանների 1289 թվի և հաջորդ տարիների արշավանքները թվելուց հետո, նա հիշատակարանում նորից անդրադառնում է 1289 թվի Տրապոլսի գրավմանը և ապա ավելացնում.

«Եւ վասն այսորիկ յաճախեաց ահ և երկեղ ի վերայ ամենայն քաղաքաց ծովեզերեայց. վասն որոյ և ես Հեթում մտախոհ եղեալ գտանել տեղի ամրոցի և ապաստանի գգուշանալ յանօրինացն սրոյ մերոցն քրիստոնէից»։

Հեթումն ապաստանելով կղզում, ինչպես երևում է հիշատակարանից, զբաղվել է շինարարական աշխատանքներով, որոնց նպատակն էր նախ ամրացնել կղզու պաշտպանունակությունը։

Շինարարական աշխատանքների վերաբերյալ հիշատակարանում կարդում ենք. «...և յարմարեալ շինեցի զսա բազում ծախիւք և մեծ փափագանօք և վասն բնակչացն մխիթարութեան շինեցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից զսուրբ եկեղեցիս որ ի մէջ կեղեցկաշէն ամրոցի բերդիս...»։

Դժբախտաբար Հեթում Պատմիչը կոնկրետ չի նշում թե ինչ կառուցումներ է կատարել, սակայն կարծում ենք ճիշտ վարված կլինենք, եթե ընդգծված բառերը մեկնաբանենք որպես ռազմական բնույթի կառուցումներ, այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև հաճախակի կրկնվող արշավանքներից սարսափած մարդիկ ապաստանելով կղզում, նրանք պաշտպանության հույսը չէին կարող կապել միայն կղզու բնական ամրության հետ։

Շինարարական աշխատանքների մասին հիշատակարանի վերոհիշյալ վկայությունը հնարավորություն է տալիս մեզ որոշակիորեն պարզել Ալիշանի անորոշ մի ենթադրությունը։ Ղ. Ալիշանը խոսելով Ծովային Բերդ

[1] Հմմ. ժամանակակից հիշատակագրի հետ. «...գերեաց և զսուրբ հայրապետն մեր ղկաթողիկոսն Տէր Ստեփաննոս, եպիսկոպոսօք և քահանայիւք և անթիւ քրիստոնէիւք... զի քահանայք և արք փառաւորք անկան ի սուր. և կանայք պատուականաց անարգեցան, աստուածային կտակարանքն յանօրինաց ձեռաց յափշտակեցան, առաքելական և մարտիրոսական նշխարք սրբոց խորտակեցան զարդն ոսկւոյ և մարգտրտաց և ականց պատուականաց՝ որ ի վերայ սրբութեանց՝ կողոպտեցաւ» («Հայապատում», էջ 501)։

«Պատմութիւն նահանգին Սիսական...», հատոր Բ. էջ 190—191. «Եւ առեալ յաւաբի զրերդն՝ կապտեցին, կողոպտեցին զամենայն սպաս եկեղեցւոյն և զանկշռելի գանձն աստուածային և զամենայն սասցուածսն, բայց զեկեղեցին ոչ քակեցին»։

[2] Այս առթիվ առաջարկվող հիշատակարանում կարդում ենք. «...և զեզերային գաւառսն մեր բոլոր սահմանօք ի ձեռն սրիկայից արանց արաբացւոց և թուրքաց գերէր միշտ և աւերէր և անբնակ առնէր»։

կղզում կատարված կառուցումների մասին,[1] հենվելով շենքերից մեկի մնացորդներում գտնվող առաջին արձանագրության մեջ պահված «Լեոն» անվան վրա, կարծում է, որ այդ կառուցումները կատարել է Լևոնը։ Չնայած նա չի նշում թե խոսքը որ Լևոնի մասին է, սակայն կարծում ենք ճիշտ հասկացած կլինենք, եթե այն վերագրենք Լեոն Ա. թագավորին (1198—1219 թ.)։

Երկրորդ արձանագրությունը, որը մեզ հասել է բավական աղճատումներով[2] հետևյալ պատկերն ունի.

«Ի թուակա(նիս) Հայոց Զ ամին՝ եւ եւթն....թիւն ի բարեպա(շտ) թագաւորին Հեթմ .... թաչգէ .... ամրոց .... Սլթանին. շինել մեծ իշխան Հեթմոյ Ռ. ....»[3]

Այս արձանագրության մասին Ալիշանը որոշակի բան չգրելով ավելացնում է «... յորում (արձանագրության մեջ. Վ. Հ.) անուն թագաւորին Հեթմոյ յայտնի և թուական Զ ամին, թերևս ի նոյն յաւելեալ եւթն, ըստ աղաւաղ ընդօրինակութեան Լանկլուայ»։[4] (Ընդգծումը հեղինակինն է)։

Ինչպես երևում է արձանագրության մեջ գտնվող տարեթվի վերջին թվականի ուղղումից՝ 700+7÷(551)=1258 թ., Լանկլուան և Ալիշանը արձանագրությունը հետևապես և այդ կառուցումները վերագրում են Հեթում Առաջինի թագաւորության շրջանին (1226—1270 թ. թ.)։ Նրանք իրենց այդ կարծիքը հիմնավորել են Ուլիամ Ռուբրյուկի մի վկայությամբ։ Ինչպես հայտնի է 1255 թ. Ու. Ռուբրյուկը եղել է Կիլիկիայում և այցելել Կոստանդին պայլին, այն ժամանակ, երբ վերջինս իր որդի՝ Հեթում Առաջինի Մոնղոլիայից բարեհաջող վերադարձի առթիվ կազմակերպել էր խրնճույք։ Այդ առթիվ Ռուբրյուկը գրում է. «Ես գտա նրան (Կոստանդին պայլին. Վ.Հ.) Ասիսում (Սիս) իր բոլոր որդիների հետ միասին, բացի մեկից՝ կոչված Բարունուսին (պարոն Օշին), որ կառուցել էր տալիս մի դղյակ...»։[5]

Ալիշանը հենվելով վերոհիշյալ վկայության վրա Օշինի կողմից Կոռիկոսում կատարված շինարարական աշխատանքների ավարտումը դնում է 1258 թվին։[6]

Մենք չենք կասկածում Ռուբրյուկի վկայության վրա, սակայն ցանկանում ենք նշել, որ վերևում մեջ բերված երկրորդ արձանագրությունը և դրա հետ աղերսվող կառուցումները, ամենայն հավանականությամբ կատարվել են ոչ թե Հեթում Առաջին թագավորի ժամանակ Օշինի կողմից, այլ հետագայում՝ Հեթում Երկրորդի ժամանակ Հեթում Պատմիչի կողմից։

Այս եզրակացությունը հաստատվում է ուշագրավ հետևյալ փաստերով։

---

[1] «Սիսուան», էջ 336։

[2] Վերոհիշյալ արձանագրությունը բավական աղավաղումներով ընդօրինակել է Վ. Լանկլուան։ Ալիշանը չհավանելով վերջինիս ընդօրինակությանը, տարբեր առիթներով գրում է. «...այլ ըստ ոչ բաղդի՝ ցարդ չեհաս առ մեզ գթոյլ օրինակ, զի յընդօրինակութեան Լանկլուայ յամի 1852, չիք և ոչ մի ի թուականացն անսղալ։ Կամ՝ «ըստ աղաւաղ ընդօրինակութեան Լանկլուայ...» կամ՝ «իսկ Լանկլուայի խառն ի խուռն և բաղմասխալ գաղափարածն այս է...», «Սիսուան», էջ 336։

[3] Նույն անդում, էջ 336, ծանոթ. 2։

[4] «Սիսուան», էջ 336։

[5] «Ուղեգրություններ» հատոր, Ա., ԺԴ—ԺԶ, Երևան, 1932 թ., էջ 26։

[6] «Սիսուան», էջ 334։ Ահա թե ինչու արձանագրության տարեթվի վերջին թվանշանը, որը մեզ չի հասել, Լանկլուան և Ալիշանը լրացնում են 7-ով։

Նախ, ինչպես վերևում ցույց տվինք, Ալիշանը արձանագրության Վ. Լանկլուայի ընդօրինակությանը կասկածանքով է մոտենում, հետևապես չի կարելի գնդել, թե արձանագրության տարեթվի փնասված մասը պիտի անպատճառ լրացնել 7-ով (որի դեպքում ստանում ենք 1258 թվականը)։

Երկրորդ, Ռուբրյուկի այն վկայությունը թե՝ Օշինը Կոստանդին պայլի մոտ չէր և «կառուցել է տալիս մի դղյակ», մեզ իրավունք չի տալիս եզրակացնելու, թե նա չէր կարող կառուցելիս լինել մի այլ դղյակ, և խոսքը անպատճառ պետք է վերաբերի Ծովային Բերդ կղզուն, ինչպես կարծում են Լանկլուան և Ալիշանը։ Նկատի ունենալով Ռ. Ռուբրյուկի վկայության այն մասը, ըստ որի նա սկզբում լինում է Կոռիկոսում (մայիսի 5—17)[1] և ապա գնում Սիս, թերևս հնարավոր է ենթադրել, որ Օշինը կառուցողական աշխատանքներով էր զբաղված Կոռիկոսի ծովեզրյա ամրոցում և ոչ թե Ծովային Բերդ կղզում։

Երրորդ՝ մեզ հուզող հարցի պարզաբանման համար բանալի կարող է հանդիսանալ քննության ենթակա արձանագրության վերջին տողը, որտեղ կարդում ենք. «... շինել մեծ իշխան Հեթմոյ Ռ...»։ Այստեղ ակամա հարց է ծագում, եթե կառուցումները կատարել է Օշինը (Հեթում Պատմիչի հայրը) Հեթում Ա-ի ժամանակ և թողել համապատասխան արձանագրություն (ինչպես կարծում են Լանկլուան և Ալիշանը), ապա ինչ գործ ունի այնտեղ «մեծ իշխան Հեթումը»։

Մենք կասկածում, որ արձանագրության մեջ հիշված Հեթումը մեր հիշատակարանի ու «Պատմության» հեղինակն է, որը 1287—1304 թվերին եղել է պայլ,[2] ուստի և արձանագրության մեջ կարող էր կոչվել «մեծ իշխան»։ Արդ՝ նկատի ունենալով արձանագրության «...շինել մեծ իշխան Հեթմոյ» հատվածը մի կողմից և հիշատակարանի վկայությունը Ծովային Բերդ կղզում Հեթում Պատմիչի կառուցումների մասին մյուս կողմից, երկրորդ արձանագրությունը և սրա հետ աղերսվող կառուցումները վերագրում ենք Հեթում Պատմիչին։ Այսպիսով Հեթում Պատմիչի հիշատակարանը հնարավորություն է տալիս վերոհիշյալ արձանագրությունը և Ռուբրյուկի վկայությունը նոր ձևով մեկնաբանել։

Հիշատակարանի մի վկայությունից պարզվում է, որ Հեթում Պատմիչը Ծովային Բերդ կղզու նորակառույց եկեղեցու համար 1293 թ. ընդօրինակել է տվել մի Ավետարան։ Այս տվյալը ցույց է տալիս, որ 1293 թ. արդեն կղզում ավարտված են շինարարական աշխատանքները։ Հետևապես արձանագրության տարեթվի փնասված մասը պետք է լրացնել ոչ թե 7-ով, ինչպես առաջարկում են Լանկլուան և Ալիշանը, այլ Ա (40) կամ ԽԱ (41) թվանշանով։

Սույն հիշատակարանը ուշագրավ է մեզ համար նաև մի այլ կողմով։ Հեթումն իր յուրայիններով ապաստանում է Ծովային Բերդ անմատույց կղզում և ապահովում իր մերձավորների և ֆեոդալական դասակարգի այլ ներկայացուցիչների կյանքը եգիպտացիների սրից, իսկ ժողովուրդը թող-

[1] «Ուղեգրություններ», հատոր Ա, էջ 25։

[2] Հեթում Պատմիչը 1294—1305 թվերին վարել է նաև գունդստաբլի պաշտոնը՝ («Տարեգիրք ..» էջ 137, Ալիշան, «Սիսուան» էջ 484)։ Այս պաշտոնը վերոհիշյալ հարցի քննության կապակցությամբ ապացույցի դեր չի կարող ունենալ։

Նըվում է բախտի քմահաճույքին անապաստան ու անօգնական։ Այս փաստը ցույց է տալիս ֆեոդալական հասարակության քաղաքացու հայրենասիրության պատկերացման նեղ շրջանակները[1]։

Հիշատակարանում պահպանվել են նաև Հեթում Պատմիչի բոլոր զավակների և կնոջ անունները։ Հիշատակարանի գրության թվականի որոշման համար կարևոր է այն հանգամանքը, որ մինչդեռ այնտեղ հիշատակված է Ստեփանոս կաթողիկոսի և այլոց գերեվարությունը, բայց ոչ մի խոսք չենք գտնում նրա մահվան մասին։ Ստեփանոսը մահացել է գերեվարությունից (1292 թ.) մեկ տարի հետո՝ 1293 թվին,[2] հետևապես սույն հիշատակարանը գրված պետք է լինի 1293 թվին։

* *

349ա Արդ յայսմ ժամանակի ցաւէր աշխարհ իբրև գծեր և երկնէր
որպէս զմայր և ծըփէր որպէս զծով, և առաւել ևս ազգք քրիստոնէ-
ից և եկեղեցի Քրիստոսի ամբոխեալ խռովէր իբրև ի հողմոց շնչմանէ
յանօրինացն յարուցմանէ. որով և երկիրս հայոց որ ի սահմանիս
Կիլիկիոյ, որում տիրէին քրիստոսապսակք թագաւորք սերեալք ի Ռը-
ուբինանց զարմէ, և իշխանք դաւառատէրք ի նոցունց ազգակցու-
թենէ. սաստիկ և անհնարին նեղութեամբ վշտանայր յեգիպտական
ազգէն, ի գազանամիտ և գոռոզաբարու սուլտանացն, որք տիրէին
անդ յաւուրս մերոյ ժամանակաց, որք և մաշեալ սպառեցին և աւե-
րեալ ջնջեցին զծովեզերեա(յ) աշխարհն յորում բնակեալ էին արի-
ական ազգն Ֆռանգաց. Զմեծն Անտիոք զգարմանահրաշն և զգեղեց-
կաշէնն, որ ընդ տէրութեամբ բրնձին, զոր կործանեալ ի հիմանց,
աւերեաց անտուխտար սուլտանն, որ անուանէր Մելիք Տահր, ի թու-
ին ՉԺԷ, յաւուր շաբաթու ի ծաղկազարդին. Եւ զԻ. պարսպեանն Տրա-
349բ պօլիս, // զոր առ Ալֆի սուլտանն Մելիք Մնսուր, ի թուին ՉԼԸ.[3]
Եւ զփառաւորն Պտղոմիդէ, որ նա ինքն Աքայ, որ էր տուն իշխա-
նութեան ՚րամփլուն և Ոսպէթալին և այլոց անուանաւոր իշխանաց,
շինեալ բարձրագոյն պրճօք և հաստահիմն պարսպօք և գեղեցկայար-
մար տաճարօք, զոր կործանեալ տապալեաց անօրէն որդին Ալֆէ
Մելիք Աշրաֆն, ի թուին ՉԽ. ի մայիս ԺԸ. Որ և սաստկագոյն քան
զայլ զոռողն զոռայր. իբրև զամպ կարկտածին ի վերայ մերոյ աշ-

[1] Վ. Լարունը իր ուսանավոր պատմության մեջ վերոհիշյալ երևույթը հիշում է տարբեր առիթներով, օրինակ, խոսելով Ֆնտխտարի 1274 թ. Կիլիկիա արշավելու մասին, գրում է.

«Եւ բովանդակ՝ ի սուր մաշեալ
Զոր ի դաշտաց՝ վայրս գտեալ,
Բայց թե յամրոցս՝ որք բնակեալ,
Եւ կամ ի դղեակ՝ ուրեք գաղթեալ,
Նոքա միայն՝ եղեն մնացեալ»

էջ 232 (տես նաև 224-րդ էջում). Նման վկայություն ունի նաև Մաղաքիա Աբեղան («Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն վասն ազգին նետողաց», Ս. Պետերբուրգ, 1870 թ., էջ 39—40).

[2] «Պատմութիւն նահանգին Սիսական...», հատոր Բ, էջ 191. Ս. Անեցի, Ժամանակագրություն, էջ 153.

[3] Պետական Ձեռագրատան № 3425 ժողովածուի մեջ գտնվող ժամանակագրության հեղինակը Տրապոլսի գրավումը դնում է ՉԼԷ (1288 թ.) ապրիլի 15-ին, էջ 7բ.

խարհիս. և ծանրացոյց առաւել սաստկութեամբ զպահանջումն հարկին։ Եւ զեզերային գաւառսն մեր բոլոր սահմանօք ի ձեռն սրիկայից արանց արաբացւոց և թուրքաց գերէր միշտ և աւերէր ե անբնակ առնէր։ Եւ ըստ բաբելացւոց բռնաւորին, ձևացեալ երկնահաս
25 ծառոյն, որ այնքան բարձրացեալ նա՝ մինչ յերկնանմանն Երուսաղէմ քաղաքն Աստուծոյ հասեալ, առ զնա և դերեաց զսպասս սրբութեան տաճարին Աստուծոյ։ Նմանապէս ե սա այնքան ներողութեամբն
350ա Աստուծոյ և յաճախութեամբ մերոցն մեղաց զօրացեալ, // մինչ զի
30 առ դաթոռն հայրապետութեանն հայոց՝ զկլայն Հռոմայական, յորում էր և աջ մերոյ սուրբ Լուսաւորչին, և առաքելական և մարտիրոսական նշխարք, և սրբութիւնք անթիւք և կտակարանք աստուածային դրոց դանձեալ բազմութեամբ, զոր և անհուն զօրօք ե բազմաձեռն պատերազմողք, ե նորադործ մեքենայից հնարաւորութեամբ
35 պատեալ պաշարեաց, սդարեալ բաբանօք ի վերուստ ե քարափոր ծակամտօք՝ նաղմելով նեղեալ ի ներքուստ, առ զաստուածաշէնն դայն և զհրաշալի դղեակն վայելչագեղ, ի թուին ՉԽԱ. յունիս ԻԸ։ Գերեաց զտէրն և զհայրն մեր հոգևոր, զկաթուղիկոսն ամենայն հայոց զտէր Ստեփաննոս, եպիսկոպոսօք և վարդապետօք, քահանայիւք և
40 անհամար քրիստոնէիւք և սպառեալ զաղգն քրիստոնէից։ Եւ բնակեցոյց ի հայրապետանոցին և ի գեղեցկապաճոյճ տաճարին զուրացողսն Քրիստոսի։ Եւ եղև այն սուգ մեծ ամենայն եկեղեցեաց, մանաւանդ ազգին հայոց, որք կրեցին զկսկիծն ողորմելի և զաղէտն աշխարհաց։

350բ45 Արդ՝ զի յայսմ ժամանակի այսպիսի նեղութիւնք ժամանեալ հասեալ ունէր զեկեղեցիս Քրիստոսի և զի որպէս ասացաք յառաջ քան զայս, ՉԼԸ. թուին եղև աւերումն Տրապօլսոյ յԱլֆէ։ Եւ վասն այսորիկ յաճախեաց ահ և երկեղ ի վերայ ամենայն քաղաքաց ծովեզերեայց. վասն որոյ և ես Հեթում մտախոհ եղեալ գտանել տեղի
50 ամրոցի և ապաստանի, զգուշանալ յանօրինացն սրոյ մերոցն քրիստոնէից և տենչացեալ ցանկացա գեղեցկադիր այսմ կղզոյս, որ հանդէպ մերոյ աստուածապահ ամրոցիս։ Եւ յարմարեալ շինեցի զսա բաղում ծախիւք և մեծ փափագանօք, և վասն բնակչացն մխիթարութեան շինեցի տաճար Աստուծոյ և տուն աղօթից՝ զսուրբ եկեղեցիս, որ
55 ի մէջ գեղեցկաշէն ամրոցի բերդիս։ Յորում և ի պէտս լուսաւորութեան հոգւոց, որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին, և Աւետարանս Քրիստոսի պիտոյ էր այսմ դրախտի եկեղեցւոյ, զոր և ետու դրել ի լուսաւորութիւն հոգւոց ի տաճարս այս աղօթողաց և յիշատակ բարեաց ինձ և իմոցն յապագայս ժամանակաց և փրկութիւն հոգւոյ-իմոյ
351ա60 ի հան // դերձեալ կեանսն յարգարաղատ ահեղ ատենին Քրիստոսի և եղև աւարտումն գրութեանս սորա ի թուին ՉԽԲ. ի ժամանակի յորում ունէր զաթոռ թագաւորութեան երկրիս հայոց օրինապահ և առաքինասէր եկեղեցազարդ պարոնն ամենայն հայոց Հեթում որդի Լևոնի բարեպաշտի, որ մխիթարութիւն էր մեզ ի վշտաբեր ժամա-
65 նակիս սրբասնունդ եղբարքք իւրով։ Արդ՝ ես Հեթում մեղուցեալ ծառա Քրիստոսի, աղաչեմ և աղերսեմ և պաղատիմ սիրոյն Քրիստոսի առ սուրբ եկեղեցիդ յիշել զիս բարեմիտ կամօք և զսիրելի որդեակն իմ զանդ-

բանիկն Օշին և զԿոստանդին և զԼեոն և զքոյր սոցա զԼոիթա ե զամուսին իմ զՁապլուն և ողորմութիւն հայցել ի Քրիստոսէ մեզ և թո-
70 ղութիւն յանցանաց մեզ և ծնողաց մերոց և եղբարց և համայնազարմից զի և ձեզ ողորմեսցի ամենաառատ պարգևաց տուօղն Աստուած, և նմա փառք յամենայն արարածոց իւրոց։